ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1266-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Վարդան Պետրոսյան 22.02.2025 01:35:31	Տվյալ ցանկից հանվել Ուկրաինան, Բելառուսը, չեն ներառվել պեստիցիդներ և ագրոքիմիկատներ արտադրող այնպիսի խոշորագույն երկներն, ինչպիսիք են Հնդկաստանը և Չինաստանը, ինչպես նաև Իսրայելը: Հաշվի առնելով, որ թունաբանահիգիենիկ հետազոտությունների մի մասն անցկացվում են կենդանիների վրա՝ առաջադեմ երկներում (հատկապես ԵՄ-ում), հորդորում են զերծ մնալ թունաբանահիգիենիկ	Ձեր կողմից ներկայացված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում նախագիծը կլրամշակվի:	

		գնահատում իրականացնելուց և՝ որպես այլընտրանք, առաջարկում են օգտվել տասնամյակներ շարունակ իրականացված գիտական հետազոտությունների արդյունքներից: Այդ պատճառով Հնդկաստանում հիմնվել են ժամանակակից լաբորատորիաներ, որոնք համապատասխանում են ԵՄ ստանդարտներին: Հնդկաստանում և Չինաստանում գործող լաբորատորիաներից օգտվում են նաև ԵՄ երկրները, որոնց արտադրանքի գրանցումը Հայաստանում իրականացվում է պարզեցված կարգով: Կից ներկայացնում եմ իտալական արտադրանքի թունաբանահիգիենիկ գնահատումը, որն անցկացվել է Հնդկաստանում: Առաջարկում եմ ցանկում ներառել Ուկրաինան, Բելառուսը, Հնդկաստանը, Չինաստանը, Իսրայելը, հակառակ դեպքում տվյալ երկրներում արտադրված և/կամ թունահիգենիկ գնահատում անցած թունաքիմիկատները դառնում են արգելված ՀՀ ներմուծման համար:		
2	Վարդան Պետրոսյան 22.02.2025 01:28:20	Հայաստանի Հանրապետությունում թունաբանահիգիենիկ հետազոտություններ իրականացնող հավատարմագրված լաբորատորիա գոյություն չունի, ուստի, մինչև	Ձեր կողմից ներկայացված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում նախագիծը կլրամշակվի:	

		նման առաջին լաբորատորիան հիմնելը, սույն ցանկում չներառված երկրներից ներմուծումը կտրականապես արգելվելու է: Այսինքն՝ սույն ցանկը հանդիսանալու է, պեստիցիդներ և ագրոքիմիկատներ արտադրող խոշորագույն երկներից՝ Հնդկաստանից, Չինաստանից և Իսրայելից ներմուծումը արգելու պատճառ:		